ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2024.2-76

Հիմնաբառեր. *տնտեսական անվտանգություն, տնտեսական անվտանգության ցուցանիշներ, սահմանային արժեք, տնտեսական անվտանգության գնահատում, գնահատման բալային մեթոդ*

Էլյանորա ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Աշխատել է պետական կառավարման համակարգի տարբեր ոլորտներում և ունի հանրային կառավարման ոլորտի երկարամյա փորձ: 113 հրապարակումների և հոդվածների, այդ թվում՝ 8 կոլեկտիվ մենագրության հեղինակ է:

Ներկայում ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի «Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ» գիտական ուղղության ղեկավարն է: Համատեղությամբ դասավանդում է Երևանի պետական համալսարանում և ՀՊՏՀ-ում:

https://orcid.org/0000-0002-9685-4363

Պետության ազգային անվտանգության ապահովումը միշտ եղել և շարունակում է մնալ ամեն մի կառավարության գործունեության առաջնահերթ գործառույթը, որը հատկապես ներկայիս բարդ և հակասական ժամանակաշրջանում, երբ հին աշխարհակարգը հեռանում է պատմական ասպարեզից, իսկ նոր աշխարհակարգի կանոնները դեռևս չեն մշակվել, մղվում է առաջին պլան:

Ազգային անվտանգությունը, որպես բազմաշերտ և բազմաբովանդակ սոցիալ-տնտեսական երևույթ, բաղկացած է մի շարք բաղադրիչներից, որոնց շարքում առաջնակարգ տեղ և նշանակություն ունի տնտեսական անվտանգությունը: Այդ հանգամանքը պայմանավորված է այն ճշմարտությամբ և պնդումով, որ երկրի ազգային շահերի լավագույն արտահայտիչը տնտեսական անվտանգությունն է, այսինքն՝ եթե երկիրն ունի տնտեսական անվտանգության բարձր աստիճան, ապա այդտեղ լավագույնս ապահովվում են ազգային շահերը:

Տնտեսական անվտանգության հիմնախնդիրների շարքում կարևորվում է դրա մակարդակի գնահատման (չափման) մոտեցումը, քանի որ միայն ճշգրիտ չափման միջոցով են հնարավոր դառնում տնտեսական անվտանգության հիմնավորված և արդյունավետ քաղաքականության ձևավորումն ու դրա իրականացումը:

Հոդվածում, ըստ տարբեր ժամանակաշրջանների, հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության մակարդակը: Ըստ որում, այդ նպատակով կիրառվել է տնտեսական անվտանգության աստիճանի գնահատման երկու մեթոդ՝ բալային միավորների և մատրիցի կազմման:

Ներածություն: Ներկայում ՀՀ ազգային անվտանգության և դրա «միջուկը» (առանցքը) ձևավորող տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծումների որոնումը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին (տարածաշրջանային, աշխարհաքաղաքական) գործոններով պայմանավորված, դարձել է չափազանց արդիական: Ավելին, գնալով մեծ տարածում է ստանում այն տեսակետը, որ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականությունը պետք է մշակվի՝ ելնելով տնտեսական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:

Հոդվածը նպատակ ունի գնահատելու ՀՀ տնտեսական անվտանգության աստիճանը՝ երկու մոդելների օգտագործմամբ, որոնցից առաջինը թույլ է տալիս հաշվել տնտեսական անվտանգության ամբողջական մակարդակը (գնահատման բալային մեթոդ), իսկ երկրորդը՝ դասակարգել տնտեսական անվտանգության սպառնալիքները՝ ելնելով դրանց վտանգավորության աստիճանից՝ այդպիսով ունենալով հիմնախնդրի լուծման հստակ ծրագիր: Մակրոտնտեսական 20 ցուցանիշների հիման վրա կատարված գնահատման արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու տնտեսական անվտանգության այն ցուցանիշները, որոնք գտնվում են ավելի վտանգավոր տիրույթում՝ պահանջելով առաջնահերթ ու անհապաղ լուծումներ:

Տնտեսական անվտանգության գնահատման մեթոդներն այդպիսով բացահայտում են տնտեսական քաղաքականության այն թույլ օղակները, որոնք կարիք ունեն բարելավման: Դրանով իսկ ձևավորվում է ինչպես առկա սպառնալիքների չեզոքացման հնարավորություն, այնպես էլ առավել անվտանգ տնտեսական միջավայր՝ հիմք հանդիսանալով կայուն և հավասարակշռված տնտեսության համար:

ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը: Պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման կարևորագույն գործիքներ են տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի կազմավորումը (կազմումը) և այդ ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշումը: Ըստ որում, սահմանային (կամ շեմային) արժեքները քանակական՝ չափելի պարամետրեր են, որոնց միջոցով հնարավոր է գնահատել տնտեսության որոշակի ոլորտում ստեղծված իրավիճակը, խոցելիության աստիճանը, ինչպես նաև սպառնալիքների առաջացման հնարավորությունը և ուժգնությունը՝ տնտեսական անվտանգության տեսանկյունից: Այլ կերպ ասած, տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքների որոշմամբ պետության տնտեսական շահերին տրվում է քանակական որոշակիություն:

Մերուժան ՄԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2008 թ.-ին ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի կողմից արժանացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի: Վերապատրաստումներ, դասընթացներ է անցել, ինչպես նաև գործունեություն ծավալել աշխարհի տարբեր երկրների կազմակերպություններում: Այժմ աշխատում է «Քաղաքագիտական, իրավագիտական և տնտեսագիտական հետազոտությունների և կանխատեսումների» ՀԿ-ում:

https://orcid.org/0000-0003-3608-0375

Կարևոր է նշել նաև, որ տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը և ցուցանիշների սահմանային (շեմային) արժեքները տարբեր երկրների համար տարբեր են՝ պայմանավորված ազգային շահերի և դրանց իրացման ուղիների տարբերությամբ, ինչը հստակորեն երևում է տնտեսական զարգացածության տարբեր աստիճաններում գտնվող երկրների մասնագետների համապատասխան սահմանումներում[1]:

Մատրիցի կազմման մեթոդի կիրառմամբ փորձել ենք գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության[2] սպառնալիքները և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները: Ըստ այս մեթոդի՝ տնտեսական անվտանգության ցուցանիշները դասակարգել ենք հետևյալ չորս չափանիշով՝ (1) ցուցանիշի միջոցով բնութագրվող վտանգի առաջացման հավանականություն, (2) դրա ազդեցության չափ, (3) տևողություն և (4) անցանկալի դրսևորումների փոփոխման արագություն:

Մատրիցի օգտագործումը բարձրացնում է տնտեսական անվտանգության ցուցանիշների գնահատման համակարգի և կառավարման արդյունավետությունը՝ օգնելով ավելի ճշգրիտ կերպով հաշվարկել որոշակի ցուցանիշի գծով տնտեսության վտանգվածության աստիճանը: Որպես արդյունք՝ դա նպաստում է ռեսուրսների արդյունավետ կառավարմանը՝ հնարավորություն ընձեռելով որոշելու ոլորտը կարգավորող կառույցների աշխատանքը և կողմնորոշիչ դեր ունենալու զարգացման հետագա քաղաքականության մշակման հարցում: Այս մեթոդը, միաժամանակ, օգտակար է տնտեսական անվտանգության ցուցանիշների ամբողջական վերլուծության տեսանկյունից, քանի որ ապահովում է տարբեր ցուցանիշների միջև բազմակողմանի փոխադարձ կապի ուսումնասիրության հնարավորություն, այսինքն՝ որևէ ցուցանիշի փոփոխությունն ինչպես է տեղի ունեցել և ինչպես կազդի մյուս ցուցանիշների վրա:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների ազդեցության չափը գնահատելու համար վերլուծության արդյունքում ընդունվել են հետևյալ արժեքները. ազդեցությունը գնահատվում է փոքր, եթե միջին արժեք / սահմանային արժեք հարաբերությունը 0.66-1 միջակայքում է, միջին՝ եթե դա 1-3 միջակայքում է և մեծ՝ եթե 3-ից ավելի է:

Թեև մատրիցի ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ երկրի տնտեսական անվտանգության ապահովումը տեղի կունենա մատրիցի առաջին վանդակում առավելագույն թվով ցուցանիշների տեղ գտնելու դեպքում, ցուցանիշների շարժը դեպի նպատակակետ, հավանաբար, տեղի կունենա ոչ ամենակարճ ճանապարհով՝ 9 … 5 … 1 վանդակների հերթականությամբ: Ըստ էության, հնարավոր են ցուցանիշների բարելավման ուղիների բազմաթիվ տարբերակներ:

Մատրիցը կիրառելի է տնտեսական անվտանգության՝ մեր կողմից ընտրված բոլոր ցուցանիշների համար: Գործնական կիրառության ընթացքում դա թույլ է տալիս գնահատել յուրաքանչյուր ցուցանիշի փաստացի վիճակը, բնութագրել տարբեր ցուցանիշների միջև փոխադարձ կապը՝ նպաստելով դրանց ծրագրավորված ու համակարգված բարելավմանը:

Մատրիցի միջոցով գնահատման կարգը հիմնվում է նախկինում տեղի ունեցած զարգացումների վերլուծության, ցուցանիշների փաստացի մակարդակների ձեռքբերման վրա ազդող գործոնների ուսումնասիրության, գործող տնտեսական կառուցակարգերի և ձևավորված պայմանների համալիր դիտարկման վրա:

Որպես օրինակ՝ ներկայացնենք առաջին, հինգերորդ և իններորդ վանդակներում ներառվող ցուցանիշների հանդեպ

[1] Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք», ԳԿՀ, 2005, էջ 111-115:

[2] Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման (մատրիցի և բալային միավորների միջոցով) մեթոդաբանությունը տե՛ս Ա. Մարկոսյան, Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2005. 250 էջ, http://www.noravank.am/upload/pdf/35_am.pdf, վերջին այցելության ամսաթիվը՝ 1.03.2024 թ.:

ներկայացվող պահանջները.

Առաջին վանդակում ներառվող տնտեսական անվտանգության ցուցանիշները պետք է երկարաժամկետ հատվածում դրսևորեն որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռու՝ անվտանգ գոտում գտնվող մակարդակ, որը լիովին համապատասխանում է ՀՀ տնտեսական շահերին:

Հինգերորդ վանդակում պետք է ներառվեն տեղի ունենալու հավանականությամբ և ազդեցության չափով միջին ցուցանիշները: Գտնվելով որոշված սահմանային արժեքի շուրջ՝ սրանք դրսևորում են կայուն վարքագիծ:

Իններորդ վանդակում տեղ գտած ցուցանիշները տնտեսական անվտանգության սպառնալիքներ են, որոնք երկարաժամկետ հատվածում շեղված են որոշված սահմանային արժեքներից: Այստեղ խաչվում են խոցելիության առավելագույն աստիճանը և սպառնալիքի իրականացման մեծ հավանականությունը, հետևաբար՝ տնտեսական շահերի իրացումը մեծապես վտանգված է:

Նշենք, որ որպես գնաճի միջին մակարդակ, որտեղ շեմային մեծությունը կարող է տատանվել 6-10% միջակայքում, մեր հաշվարկներում ընդունվել է ոչ ավելի, քան 10% շեմային մեծությունը, իսկ տնտեսական աճի շեմային մեծության համար, որը կարող է տատանվել 2-3% միջակայքում՝ ոչ պակաս, քան 3% սահմանագիծը:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների միջին արժեքների հաշվարկի արդյունքում դրանց մի մասն ակնհայտորեն ընդգրկվել է անվտանգության գոտում՝ հայտնվելով ավելի լավ վիճակում, քան սահմանային արժեքի դեպքում: Այդ ցուցանիշների համար չի հաշվարկվել «միջին արժեք/սահմանային արժեք» հարաբերակցությունը, և դրանք ավտոմատ կերպով տեղափոխվել են մատրիցի ամենաանվտանգ՝ առաջին վանդակ: Արդյունքում 2001-2006 թվականները բնութագրող տնտեսական ցուցանիշների մեծ մասը՝ 20-ից 12-ը, հայտնվել է ամենաանվտանգ գոտում, մինչդեռ ամենավտանգավոր (9-րդ) վանդակում է մնացել աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշը:

Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ 2001-2006 թթ.-ին 1995-2000 թթ. նկատմամբ բարելավվել են Ջինիի գործակիցը (ՏԱՑ՝ տնտեսական անվտանգության ցուցանիշ), գնաճի միջին մակարդակը (ՏԱՑ 4), ներդրումների ծավալը (ՏԱՑ 12), բյուջեի պակասուրդը (ՏԱՑ 16) և սպառման մեջ ներմուծված սննդամթերքի տեսակարար կշիռը (ՏԱՑ 20) բնութագրող ցուցանիշները:

Ուստի կարող ենք եզրակացնել, որ ուսումնասիրված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության աստիճանը զգալիորեն բարձրացել է: Ըստ որում, 2020 թվականին անվտանգության մակարդակի որոշ չափով նվազումը պայմանավորված է եղել COVID-19 համավարակի և 44-օրյա հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքներով: Տնտեսական անվտանգության ապահովման գործընթացում, որպես առաջնահերթություններ, կարելի է առանձնացնել այն ցուցանիշները, որոնք ավելի շատ են շեղված շեմային մեծություններից (տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, աղքատության մակարդակը, Ջինիի (եկամուտների կենտրոնացման) գործակիցը, կրթության և գիտության համար կատարված ծախսերը): Վտանգավոր մակարդակում են նաև արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, ինչպես նաև ներքին սպառման մեջ ներմուծման տեսակարար կշիռը (աղյուսակ 1):

Ուսումնասիրությունը վկայում է, որ վերը նշված ցուցանիշների բարելավումը շարունակելու է մնալ ՀՀ կառավարության գործունեության ուշադրության առանցքում: Կարևոր է նաև գնահատել, թե տնտեսական անվտանգության ցուցանիշներն ինչպես են արտացոլվել ռազմավարական փաստաթղթերում, որոնցից են ՀՀ կառավարության ծրագրերը: Ուսումնասիրությունները հաստատում են ՀՀ կառավարության այն մոտեցումը, ըստ որի՝ առաջիկայում տնտեսական անվտանգության վերը նշված ուղղություններով ընդունվելիք ծրագրերի կազմման և դրանց կենսագործման միջոցով հնարավոր կլինի երկրի

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքներն ըստ մատրիցների կազմման միջոցով մեթոդի և դրանց դասակարգումն ըստ վտանգավորվածության աստիճանի, 1995-2022 թթ.

Տնտեսական անվտանգության ցուցանիշի անվանումը	Պայմանական նշանը	Ժամանակահատվածը				
		1995-2000	2001-2006	2007-2011	2012-2016	2017-2022
		Մատրիցի վանդակի համարը				
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	ՏԱՑ 1	9	9	9	9	9
Ֆինիի գործակիցը (եկամուտների կենտրոնացման գործակիցը)	ՏԱՑ 2	9	9	9	9	9
Միջին ամսական անվանական աշխատավարձը, ԱՄՆ դոլար	ՏԱՑ 3	9	9	8	8	6
Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %	ՏԱՑ 4	8	8	8	8	8
Գնաճի միջին մակարդակը, %	ՏԱՑ 5	9	4	7	3	4
Գործազրկության մակարդակը (միջին տարեկան), %-ով՝ տնտեսապես ակտիվ բնակչության նկատմամբ	ՏԱՑ 6	8	7	9	9	9
Տնտեսական հավելաճը, %	ՏԱՑ 7	4	1	6	5	4
Ներքին պետական պարտքը (ազգային արժույթով), %-ով՝ ՀՆԱ-ի նկատմամբ	ՏԱՑ 8	1	1	2	3	6
Աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, %	ՏԱՑ 9	9	9	9	9	9
Գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, %	ՏԱՑ 10	8	9	9	9	9
Արդյունաբերական արտադրանքի մեջ մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը, %	ՏԱՑ 11	8	8	9	8	8
Արդյունաբերական արտադրանքի մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, %	ՏԱՑ 12	9	9	9	9	9
Հիմնական միջոցներում կատարված ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, %	ՏԱՑ 13	9	7	8	9	9
Կյանքի սպասվող տևողությունը՝ հաշվարկված ծննդից (տարի)	ՏԱՑ 14	6	6	6	6	6
Հանցագործության մակարդակը (հանցագործությունների թիվը՝ 100 հազար մարդու հաշվով)	ՏԱՑ 15	7	7	8	9	9
Արտաքին պետական պարտքը (կառավարության և կենտրոնական բանկի) ՀՆԱ-ի նկատմամբ, %	ՏԱՑ 16	9	9	9	9	9
Բյուջեի պակասուրդը (հավելուրդը) ՀՆԱ-ի նկատմամբ, %	ՏԱՑ 17	9	3	6	7	7
Դրամական զանգվածը (M2) ՀՆԱ-ի նկատմամբ, %	ՏԱՑ 18	9	9	9	8	7
Ներմուծված ապրանքների և ծառայությունների հարաբերությունը ՀՆԱ-ին, %	ՏԱՑ 19	8	8	7	7	7
Ներմուծման տեսակարար կշիռը վերջնական սպառման մեջ, %	ՏԱՑ 20	8	8	7	7	7

ազգային անվտանգության հիմքը ձևավորող տնտեսական անվտանգությունը հասցնել ավելի բարձր աստիճանի, և առաջիկայում հանրապետությունն իրական նախադրյալներ կունենա մոտենալու ընդհուպ տնտեսական անվտանգության տեսանկյունից բացարձակ անվտանգ երկրների խմբին[3]:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն ընդունվում է որպես ուղենիշային փաստաթուղթ՝ անվտանգության քաղաքականության հիմնական ուղղությունները, սպառնալիքները, մարտահրավերներն ու առաջ-

[3] Տես, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (2021-2026 թթ.)՝ հաստատված ՀՀ կառավարության 2021 թ.-ի օգոստոսի 18-ի № 1363-Ա որոշմամբ, էջ 20-30: Էլեկտրոնային ռեսուրսն առկա է https://www.gov.am/files/docs/4586.pdf հղումով:

նահերթությունները սահմանելու համար:

Դասակարգման արդյունքում հնարավոր է լինում ցուցանիշները տեղադրել տնտեսական անվտանգության վտանգավորության աստիճանը բնութագրող ընդհանրական մատրիցում (աղյուսակ 2-6): Մատրիցը հնարավորություն է տալիս որոշելու տնտեսական անվտանգության սպառնալիքները, որոնք իրենց ազդեցության չափով և առաջացման հավանականությամբ այն աստիճանի են հասել, որ պահանջվում է իրականացնել շտապ միջոցառումներ դրության բարելավման համար:

ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման բալային մեթոդը թույլ է տալիս առավել ակնառու բնութա-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը, 1995-2000 թթ.

Առաջացման հավանականություն	Փոքր	Միջին	Մեծ
Մեծ, > 0,66	6 ՏԱՑ 14	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 6, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 19, ՏԱՑ 20	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 3, ՏԱՑ 5, ՏԱՑ 9, ՏԱՑ 12, ՏԱՑ 13, ՏԱՑ 16 ՏԱՑ 17, ՏԱՑ 18
Միջին, 0,33 < X < 0,66	3	5	7 ՏԱՑ 15
Փոքր, < 0,33	1 ՏԱՑ 8	2	4 ՏԱՑ 7

Ազդեցության չափը

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը, 2001-2006 թթ.

Առաջացման հավանականություն	Փոքր	Միջին	Մեծ
Մեծ, > 0,66	6 ՏԱՑ 14	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 11, ՏԱՑ 19, ՏԱՑ 20	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 3, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 12, ՏԱՑ 16, ՏԱՑ 18
Միջին, 0,33 < X < 0,66	3 ՏԱՑ 17	5	7 ՏԱՑ 6, ՏԱՑ 13, ՏԱՑ 15
Փոքր, < 0,33	1 ՏԱՑ 7, ՏԱՑ 8	2	4 ՏԱՑ 5

Ազդեցության չափը

ԱՂՅՈՒՍԱԿ 4

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը, 2007-2011 թթ.

Սպառնալիքի հավանականությունը	Մեծ	Միջին	Փոքր
Մեծ, > 0,66	6 ՏԱՑ 7, ՏԱՑ 14, ՏԱՑ 17	8 ՏԱՑ 3, ՏԱՑ 4, ՏԱՑ 13, ՏԱՑ 15, ՏԱՑ 19	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 6, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 11, ՏԱՑ 12, ՏԱՑ 16 ՏԱՑ 18
Միջին, 0,33 < X < 0,66	3	5	7 ՏԱՑ 5, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
Փոքր, < 0,33	1	2 ՏԱՑ 8	4

Ազդեցության չափը

ԱՂՅՈՒՍԱԿ 5

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը, 2012-2016 թթ.

Սպառնալիքի հավանականությունը	Մեծ	Միջին	Փոքր
Մեծ, > 0,66	6 ՏԱՑ 14	8 ՏԱՑ 3, ՏԱՑ 4, ՏԱՑ 11, ՏԱՑ 18	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 6, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 12, ՏԱՑ 13, ՏԱՑ 15, ՏԱՑ 16
Միջին, 0,33 < X < 0,66	3 ՏԱՑ 5, ՏԱՑ 8	5 ՏԱՑ 7	7 ՏԱՑ 17, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
Փոքր, < 0,33	1	2	4

Ազդեցության չափը

ԱՂՅՈՒՍԱԿ 6

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը, 2017-2022 թթ.

Սպառնալիքի հավանականությունը	Մեծ	Միջին	Փոքր
Մեծ, > 0,66	6 ՏԱՑ 3, ՏԱՑ 8, ՏԱՑ 14,	8 ՏԱՑ 4, ՏԱՑ 11	9 ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 6, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 12, ՏԱՑ 13, ՏԱՑ 15, ՏԱՑ 16
Միջին, 0,33 < X < 0,66	3	5	7 ՏԱՑ 17, ՏԱՑ 18, ՏԱՑ 19, ՏԱՑ 20
Փոքր, < 0,33	1	2	4 ՏԱՑ 5, ՏԱՑ 7

Ազդեցության չափը

գրել ցուցանիշի «հետագիծը» և լիարժեք պատկերացում կազմել տնտեսական անվտանգության ընդհանրական վարկանիշների մասին: Այլ կերպ ասած, տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման բալային միավորների մեթոդը հնարավորություն է տալիս տնտեսական անվտանգության մակարդակը գնահատելու 20 մակրոտնտեսական ցուցանիշների մեծությունների գումարային չափելիությամբ և ստանալու ինտեգրալային (գումարային) ցուցանիշ՝ դրանով իսկ ամբողջական ու քանակական պատկերացում կազմելով այդ երևույթի շարժընթացի վերաբերյալ:

Բալային մեթոդի միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները երկարաժամկետ կտրվածքով (1995-2000, 2001-2006, 2007-2011, 2012-2016, 2017-2022), ինչպես նաև ըստ առանձին տարիների (1995, 2000, 2021, 2022) ներկայացված են գծապատկեր 1-ում և 2-ում:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա հաշվարկված ցուցանիշները վկայում են, որ հանրապետությունը բավական անվտանգ վիճակում է (հավաստիությունը կախված է վիճակագրական տվյալների ճշտությունից): Միաժամանակ, հարավկովկասյան տարածաշրջանի երեք երկրների շարքում Հայաստանի ցուցանիշը զիջում է հարևան Ադրբեջանի ցուցանիշը, ինչը նշանակում է, որ ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի բարելավման նպատակով անհրաժեշտ է մշակել համապատասխան կառուցակարգեր և



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների գումարային մեծությունը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների գումարային մեծություններն ըստ որոշակի տարիների

դրանց հասնելու գործիքակազմ:

Եզրակացություն: Տնտեսական անվտանգության որոշակի բաղադրիչներ իրենց տեղն են գտել ռազմավարական բնույթի մի շարք փաստաթղթերում, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում (մասնավորապես՝ պարենային և էներգետիկ անվտանգության մասով), ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրերում: Սակայն, այդ ծրագրերում ավելի շատ խոսվում է մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների (ՀՆԱ, ներդրումներ, աղքատության մակարդակ և այլն) մասին, մինչդեռ առկա տնտեսական անվտանգության ցուցանիշները, ըստ էության, չունեն համակարգված բնույթ և շարունակականություն, ինչը տպավորություն է ստեղծում, որ դրանց բովանդակության և ձևի միջև չկա տրամաբանական, օրգանական կապ:

Նշված հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է մշակել ՀՀ տնտեսական անվտանգության ծրագիր (հայեցակարգ), որը հիմք և ուղեցույց կհանդիսանա հանրապետության ռազմավարական փաստաթղթերի և, առաջին հերթին, ազգային անվտանգության ռազմավարության, կառավարության ռազմավարական ծրագրերի համար:

Բալային մեթոդով ՀՀ տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները վկայում են, որ ինտեգրալային այդ ցուցանիշը 1995-2000 թթ. 8,2 և 2001-2006 թթ. 11,3 միավորից 2017-2022 թթ.-ին կազմել է 10,4 միավոր, իսկ առանձին տարիների, օրինակ՝ 1995 թ.՝ 7,8, 2000 թ.՝ 10,8, 2020 թ.՝ 10,5, 2021 թ.՝ 10,7, 2022 թ.՝ 11,3 միավոր: Նկատենք, որ տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման նպատակով ընտրված են մակրոտնտեսական 20 ցուցանիշներ, որոնց ընդհանուր գումարը 20 միավոր է:

Տնտեսական անվտանգության մատրիցի մեթոդը հնարավոր է դարձնում տնտեսական անվտանգության առանձին ցուցանիշների՝ իրենց շեմային մեծություններից շեղման բացահայտումը՝ այդպիսով պարզելով յուրաքանչյուր մակրոտնտեսական ցուցանիշի սպառնալիքի (ռիսկի առաջացման) չափը կամ դրա վտանգավորության աստիճանը: Այսպես՝ եթե 1995-2000, 2001-2005 թվականներին 9-րդ (ամենավտանգավոր) վանդակում են գտնվել 8, ապա 2007-2011, 2017-2022 թվականներին՝ 9 մակրոտնտեսական ցուցանիշներ: Այս խմբի մեջ մտնող ցուցանիշներն են բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, Ջինիի գործակիցը, գնաճի միջին մակարդակը, աղքատության ցուցանիշի «բնական» մակարդակը, գիտական հետազոտությունների և մշակումների համար կատարված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ, արդյունաբերական արտադրանքի մեջ մեքենաշինության տեսակարար կշիռը, հիմնական միջոցներում ներդրումների ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ, հանցագործությունների մակարդակը, արտաքին պետական պարտքը: Հատկապես առաջիկա տարիներին ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության ուշադրության կենտրոնում պետք է լինի տնտեսական անվտանգության վերը նշված ցուցանիշների արդյունավետ կարգավորումը, ինչն էականորեն կբարձրացնի հանրապետության տնտեսական, ուստի և ազգային անվտանգության մակարդակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Ա., Ազգային անվտանգություն. հասկացությունները, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2002 թ., 89 էջ, http://www.noravank.am/arm/books/detail.php?ELEMENT_ID=5191, վերջին այցելության ամսաթիվը՝ 1.03.2024 թ.
2. Բեջանյան Հ. և այլք, Հայաստանի Հանրապետության վրա բացասաբար ազդող գործոնները, դրանք բնութագրող ցուցանիշների ընտրությունը և այդ ցուցանիշների համար առավելագույն կամ նվազագույն շեմերի սահմանման հնարավորությունները, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2021 թ., 126 էջ, DOI: 10.52174/978-9939-61-228-7:
3. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում, հուլիս 2020, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf, վերջին այցելության ամսաթիվը՝ 1.03.2024 թ.
4. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի N ՆՀ-37-Ն հրամանագիրը, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189, մուտքի ամսաթիվը՝ 1.03.2024 թ.
5. Մարկոսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ ԴԱՐ», թիվ 3(5), 2004 թ., էջ 19-48, http://www.noravank.am/upload/pdf/216_am.pdf, վերջին այցելության ամսաթիվը՝ 1.03.2024 թ.
6. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2005, 250 էջ, http://www.noravank.am/upload/pdf/35_am.pdf, վերջին այցելության ամսաթիվը՝ 1.03.2024 թ.
7. Շահգելդյան Մ., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2002 թ., 71 էջ, http://www.noravank.am/arm/books/detail.php?ELEMENT_ID=5197, վերջին այցելության ամսաթիվը՝ 1.03.2024 թ.
8. Սարգսյան Ա. Հ. և այլք, Ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014 թ., 87 էջ:
9. Внешнеэкономические связи. М., 1992. Вып. 8: Страны СНГ в системе мирового хозяйства: проблемы экономической безопасности.
10. Kozitsyn, A.A. & Dudinskaya, M.V. (2015). Competitiveness and economic security-Priority problems of theregion's metallurgical comples and its leaders in the conditions of instability. Economy of Region, 2015, vol. 3, pp. 204-215, DOI: 10.17059/2015-3-17Li
11. Prodius O.I. (2016). Features of economic security of enterprises in developed countries. Scientific Bulletin of the International Humanities University. № 19., 2016, p. 79-82.
12. Rodríguez, G., Vassallo, R., & Castillo, P. (2023). Effects of external shocks on macroeconomic fluctuations in Pacific Alliance countries. Economic Modelling, 124, 106302.
13. Zigunova A., Shevkunov N., Logvinova I., Kislov I., and Shevchenko V. Ensuring economic security of the enterprise in anti-crisis conditions. (2020). DOI: 10.1051/e3sconf/202015704030
14. Subota M.V. Methodology for assessing the socio-economic security of sustainable development of economic entities. Efficient economy, № 12. (2019). DOI: 10.32702/2307-2105-2019.12.101
15. Lashitew, A.A, Ross, M.L, & Werker, E. (2021). What Drives Successful Economic Diversification in Resource-Rich Countries? The World Bank Research Observer, 36, 2, 164–196. https://doi.org/10.1093/wbro/lkaa001
16. Analysis of development policies' alignments with budget programmes", UNDP, "Making Finance Work for Transformative Change in Armenia: Unlocking Finance for Armenia 2030" Project, 2023, 38 pages.

Элянора МАТЕВОСЯН
Институт экономики им. М.Котаняна НАН РА,
кандидат экономических наук, доцент
Меружан МАРКОСЯН
Общественная организация «Политологических, юридических
и экономических исследований и прогнозирований»,
кандидат экономических наук

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

РЕЗУЛЬТАТЫ ОЦЕНКИ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Обеспечение национальной безопасности государства всегда было и продолжает оставаться первоочередной функцией любого правительства, которая, особенно в сложный и противоречивый период современного мира, когда старый мировой порядок уходит с исторической арены и новый еще не разработан, выдвигается на первый план.

Понятие национальной безопасности, являясь многослойным и многосодержательным социально-экономическим явлением, состоит из ряда компонентов, среди которых ведущее место и значение имеет экономическая безопасность. Это обстоятельство обусловлено истинностью утверждения о том, что лучшим выражением национальных интересов страны является экономическая безопасность, то есть, если в стране обеспечивается высокая степень экономической безопасности, то национальные интересы страны также лучше защищены.

Среди проблем экономической безопасности важное значение занимают подходы к ее оценке (измерению), поскольку только благодаря точному измерению становится возможным формирование и реализация обоснованной и эффективной политики экономической безопасности.

В статье рассчитан уровень экономической безопасности для различных временных рамок длительного периода Республики Армения. Использовалось два метода оценки уровня экономической безопасности: бальный метод и метод составления матрицы.

Ключевые слова: *экономическая безопасность, показатели экономической безопасности, предельное значение, оценка экономической безопасности, бальный метод оценки*

Elyanora MATEVOSYAN
Institute of Economics after M. Kotanyan, NAS RA
Meruzhan MARKOSYAN
Political, Legal and Economic Research and Forecasting NGO,
PhD in Economics

SECURITY AND CHALLENGES

RESULTS OF ASSESSING THE ECONOMIC SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

Ensuring the national security of the state has always been and continues to be the primary function of any government, especially in the complex and contradictory period of the modern world, when the old world order is leaving the historical arena and a new one has not yet been developed.

The concept of national security, being a multi-layered and multi-content socio-economic phenomenon, consists of several components, among which economic security holds a leading place and importance. This circumstance is due to the fact that the best expression of a country's national interests is economic security; if a country has a high degree of economic security, then the country's national interests are better protected.

Among the problems of economic security, approaches to its assessment (measurement) are important, since only through accurate measurement does it become possible to form and implement a sound and effective economic security policy.

The paper calculates the level of economic security for various time frames over an extended period in the Republic of Armenia. Two methods were used to assess the level of economic security: the scoring method and the matrix method.

Keywords: *economic security, indicators of economic security, marginal value, assessment of economic security, scoring method of assessment*